



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 10 -Լ**

2022թ. նոյեմբեր «02»

ք. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետը «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Որակի ապահովման քաղաքականություն»-ը համաձայն հավելված 1-ի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳՄԿԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ



**«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական
ինստիտուտ» հիմնադրամ**



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....	3
2. Օգտագործված տերմիններ.....	5
3.Որակի ներքին ապահովման քաղաքականությունը.....	9
4.Որակի ապահովման քաղաքականության բարելավման մեխանիզմները.....	10
5.Որակի ապահովման համակարգը.....	12
6.Որակի ապահովման համակարգի մոդելը.....	12
7.Որակի ապահովման գործընթացները և ընթացակարգերը.....	17
8.Որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը.....	25
9.Որակի ապահովման ձեռնարկը և տեղեկատվական համակարգը.....	29

Հավելված 1

**«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի
02.11.2022թվականի Գիտական խորհրդի թիվ 10-Լ որոշման**



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման քաղաքականությունը և դրա իրականացման գործընթացները, լինելով բուհի որակի ապահովման ներքին համակարգի հիմնական առանցքը, պայմաններ են ապահովում որակի մշակույթի շարունակական զարգացման համար, նպաստում շրջափուլային բարելավումների իրականացմանը, որտեղ շահագրգիռ կողմերը պատասխանատվություն են կրում կրթության արդյունքների որակի համար:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի առաքելությունն է նպաստել ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն, միջազգայնացում և հանրային ծառայություններ) հանրային վստահության ամրապնդմանը և հավաստել, որ բուհի շնորհած որակավորումների որակը շարունակաբար բարելավվում և արդյունավետ կերպով կառավարվում է:

Ներկայումս բուհը մտել է որակի մշակույթի զարգացման նոր փուլ և իրականացված քայլերի արդյունքում ձևավորվել է այնպիսի կրթական միջավայր, որը պահանջում է ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունից բխող քաղաքականության վերանայում՝ կրթական ու գիտահետազոտական գործընթացների մշտադիտարկմամբ, շահակիցների կարիքների պարբերաբար վերհանմամբ և հաշվառմամբ, ինչպես նաև այն խնդիրների վերլուծմամբ, որոնք կարող են ռիսկային լինել կառավարման, կրթական ու գիտահետազոտական գործունեության, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, միջազգային կապերի, շարժունության ապահովման համար:

ՀՖԿՍՊԻ-ի ՈՆԱ ընդհանուր քաղաքականությունն իրականացվում է բուհի տեսլականի, առաքելության և հիմնական արժեքների համատեքստում: Կրթության ոլորտի զարգացումները, շահակիցների ներգրավվածության աճը և նրանց պահանջների փոփոխությունները բուհի առջև խնդիր են դնում հիմնարար քաղաքականության և ընթացակարգերի մշակման, որոնց իրականացումը կարող է էականորեն բարձրացնել տրամադրվող կրթական ծառայությունների որակը և արդյունքում ամրապնդել բուհի մրցակցային դիրքերը:

ՈՆԱ քաղաքականությունը սահմանում է ՀՖԿՍՊԻ-ի որակի ապահովման համակարգի նպատակներն ու խնդիրները, ՈՆԱ հիմնական ոլորտները, ՈՆԱ գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշներն ու ընթացակարգերը՝

արտացոլելով ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքի առանձնահատկությունները:

ՈԱ քաղաքականությունը սահմանում է ՀՖԿՍՊԻ-ի սկզբունքային մոտեցումները ՈԱ հիմնահարցերի և դրանց իրագործման ուղիների վերաբերյալ: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն մեխանիզմների և սկզբունքների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգաբերում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները:

ՀՖԿՍՊԻ-ի որակի գնահատման և բարելավման քաղաքականությունը համակարգվում է Որակի ապահովման բաժնի կողմից (այսուհետ՝ ՈԱԲ) և հիմնված է մշտադիտարկման, որակի ապահովման ներքին աուդիտի, ներքին և արտաքին շահակիցների հետ կարիքների պարբերական գնահատման, բենչմարքինգի (համեմատական վերլուծություն) վերլուծական տվյալների վրա՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում (ESG) գործող չափանիշների և չափորոշիչների փոփոխություններին համապատասխան՝ հավաստիացնելով, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են միջազգային հավատարմագրման ու որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին ու զարգացումներին:

Համաձայն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների՝ բուհի որակի ներքին ապահովման համակարգը պետք է պարունակի հետևյալ 7 հիմնական կառուցամասերը.

- 1) որակի ապահովման ռազմավարություն, քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր ու չափորոշիչներ,
- 2) ծրագրերի և որակավորումների հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման պաշտոնական ընթացակարգեր,
- 3) ուսանողների գնահատման չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր,
- 4) դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ,
- 5) կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ,
- 6) ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար ամբողջական տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում,
- 7) ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում:

Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է Ինստիտուտի գործունեության բոլոր ոլորտների վրա, որոնք են՝ կառավարում և վարչարարություն, մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակում, ներդրում, իրականացում և գնահատում, ուսումնառություն և դասավանդում,

պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորում և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում, կրթություն և հետազոտություն, ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ, հանրային կապեր, արտաքին կապեր և միջազգայնացում, որակի ապահովման ներքին համակարգ:

ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները որակի ապահովման «նպատակին համապատասխանության» մոդելի հիմնական ուղղորդիչներն են, քանի որ սահանում են արդյունքների պլանավորման, մշտադիտարկման (մոնիթորինգի) և չափման շրջանակը: Դրանք նպաստում են նաև ներքին և արտաքին շահակիցների հետ կապին:

Որակի կառավարման վերաբերյալ արդյունավետ որոշումները և եզրակացությունները ընդունվում են փաստական տվյալների ու տեղեկատվության վերլուծության հիման վրա:

Ինստիտուտը պատասխանատու և հաշվետու է հասարակության առջև կրթության որակի ապահովման համար, որն իրականացվում է ծրագրերի և որակավորումների պարբերական գնահատումներով: Որակի գնահատման գործընթացը հիմնված է ինքնագնահատման և արտաքին անկախ փորձաքննության վրա:

ՀՖԿՍՊԻ-ի որակի քաղաքականությունն ուղղված է բուհի ներքին և արտաքին շահակիցներին (ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակազմ, շրջանավարտներ, գործատուներ և այլն): Որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու է բուհի ողջ աշխատակազմը:

Որակի ապահովման քաղաքականությունը հաստատված է բուհի Գիտական խորհրդի կողմից և միտված է ՈԱ ներքին համակարգի շարունակական բարելավմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Գնահատում. բուհի գործունեության տարբեր ոլորտների որակի ապահովման համակարգված և պարբերական վերլուծության գործընթաց, որը վեր է հանում կոնկրետ խնդիրներ և հանգում եզրակացությունների և բարելավման առաջարկությունների:

Ինքնագնահատում(ինքնավերլուծություն).ուսումնական հաստատության կանոնավոր գնահատում՝ ներկա վիճակը ստուգելու և կարիքները բացահայտելու նպատակով:

Փորձագիտական գնահատում. բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:

Մասնագիտության կրթական ծրագիր (ՄԿԾ). բարձրագույն կրթության հիմնական բաղադրիչ, որը ներառում է որոշակի բնագավառում կատարվող բոլոր գործընթացները՝ ուսուցման կազմակերպում, կառավարում, ուսումնառություն, հետազոտություն:

Ծրագրի մշակման արտոնում. Կրթական ծրագրերի մշակման արտոնումը բուհի պաշտոնական համաձայնությունն է ուսումնական ստորաբաժանմանը (ֆակուլտետին)՝ սկսելու նոր կրթական ծրագրի մշակման գործընթացը՝ ներկայացված հայտի համաձայն: Արտոնման գործընթացի նպատակն է գնահատել ներկայացված ծրագրի հայտի հիմնավորումը և դրա համապատասխանությունը ծրագրերի հաստատման ՀՖԿՍՊԻ-ի պահանջներին/չափանիշներին:

Ծրագրի հաստատում. Կրթական ծրագրերի հաստատման գործընթացի նպատակն է գնահատել ծրագրի մշակման որակը և ուսումնական ստորաբաժանման կարողությունը՝ այն իրականացնելու սահմանված կրթական չափորոշիչներին և/ կամ ծրագրային կողմնորոշիչներին համապատասխան:

Ծրագրի մշտադիտարկում (մոնիթորինգ) և վերանայում. կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից են: Կրթական ծրագրերի կանոնավոր մոնիթորինգը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին ու համապատասխան կրթական չափորոշիչի (որակավորումների ոլորտային շրջանակի) պահանջներին: Մոնիթորինգի վերջնարդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:

Կրթական չափանիշ. էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և/կամ չափորոշիչի իրագործման աստիճանը:

Կրթության որակ կամ ակադեմիական որակ. բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև հատուկ չափանիշներին՝ տվյալ համակարգի, բուհի, ծրագրի կամ մասնագիտական ուղղության շրջանակներում: Կախված մոտեցումից և օգտագործման նպատակից՝ տարբերվում են որակի տարբեր սահմանումներ. որակը՝ որպես գերազանցություն, որակը՝ որպես համապատասխանություն սահմանված նպատակին, որակը՝ որպես բարելավում և այլն:

Որակի ապահովում (quality assurance). բարձրագույն կրթության համակարգի, բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման և բարելավման շարունակական գործընթաց է: Որակի ապահովումը բուհի գործունեությունը բարելավելու և զարգացնելու պաշտոնապես ընդունված համակարգ է՝ ՈԱՇ-ին, պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին համապատասխան:

Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ). Կրթական տարբեր մակարդակների համար սահմանված նկարագրիչներին համապատասխան որակավորումների դասակարգման գործիք, որի նպատակն է փոխկապակցել ազգային որակավորումները և համապատասխանեցնել աշխատաշուկայի և հասարակության պահանջներին՝ դրանք դարձնելով թափանցիկ և հասկանալի:

Որակի աուդիտ (quality audit). Աուդիտը մասնագիտական ուսումնական հաստատությունում ընթացակարգերի, գործընթացների և մեխանիզմների գնահատումն է: Աուդիտի դեպքում գնահատվում է ոչ թե բուն համապատասխանությունը նպատակներին, այլ որակի ապահովման ընթացակարգերն ու մեխանիզմները, առաքելության ու նպատակների իրականացման գործընթացները:

Որակի բարելավում (quality improvement). որակի պլանավորման և որակի մոնիթորինգի միջոցով կառավարվող որակի բարձրացման շարունակական գործընթաց: Բուիը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացների արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Որակի ներքին ապահովման համակարգ (internal quality assurance system). Սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ բուիի և դրա ծրագրի որակի ապահովման քաղաքականության ու խնդիրների իրականացման կառավարման համակարգ: Ապահովում է որակի ապահովման գործընթացների տեսանելիությունը և հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակավորման նկարագրիչներ. ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարբերությունները:

Որակի կառավարում (quality management). բարձրագույն կրթության որակն ապահովելու նպատակով բուիի կամ կրթական համակարգի մակարդակով պարբերաբար իրականացվող միջոցառումների համակցություն՝ որակի բարելավման շեշտադրմամբ:

Որակի մշակույթ (quality culture). ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում: Կրթության որակի շարունակական բարելավման համակարգը ձևավորվում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմների գործադրմամբ, կատարողականի ցուցիչների պարբերաբար վերանյմամբ՝ երաշխավորելու, որոնք դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են որակի ապահովման չափանիշներին և ուղենիշներին ազգային և միջազգային մակարդակներում:

Որակի մշակույթ ունեցող բուիերում ծառայություն մատուցող և ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձ պատասխանատու է մյուսների համար՝ փոխհամագործակցելով նրանց հետ: Որակի մշակույթը ոչ միայն որակի ապահովման

համար պատասխանատուների, այլև ուսումնական հաստատության բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է:

Որակի պլանավորում (quality planning). գործողություններ, որոնք խնդիրներ և պահանջներ են սահմանում որակի համակարգի առանձին տարրերի կիրառման համար:

Որակի վերահսկողություն (quality control). որակի ուսումնասիրության գործընթաց, որը նպատակաուղղված է բուհի կամ կրթական ծրագրի որակի ներքին (ներբուհական) կամ արտաքին գնահատմանը:

Որակի քաղաքականություն (quality policy). որակի ապահովման ասպարեզում ընդհանուր մտադրություններն ու ուղղությունները, որոնք պաշտոնապես ներկայացվում են բուհի ղեկավարության կողմից: Քաղաքականությունը հիմնված է որակի շարունակական բարելավման սկզբունքի վրա:

Հաշվետվողականություն. հաշվետվողականության համատեքստում որակի ներքին ապահովումը կիրառվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ, նկարագրում է բուհի կատարողականությունը՝ հասարակության և շահակիցների առջև հրապարակայանության և թափանցիկության համակարգը, հաշվետվողականության ապահովման փուլերը, մեթոդները և մեխանիզմները:

Հավատարմագրում. գործընթաց է, որով արտաքին կառույցը գնահատում է մասնագիտական ուսումնական հաստատության կամ կոնկրետ մասնագիտության կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով:

ՀԱՊԱՎՈՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԲԿՏ	Եվրոպական բարձրագույն կրթության տարածք
ՈԱ	Որակի ապահում
ՈԱԲ	Որակի ապահովման բաժին
ՈԱՀ	Որակի ապահովման համակարգ
ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԵՁՈՒ	Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ
ՈԱՇ	Որակի ազգային շրջանակ
ՈՆԱ	Որակի ներքին ապահովում
ՄԿԾ	Մասնագիտությունների կրթական ծրագիր
ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՊԻԳԲ	Պլանավորել, իրականացնել, գնահատել, բարելավել
ECTS	Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ
ENQA	Որակի ապահովման եվրոպական ասոցիացիա
KPI	Գործունեության արդյունավետության ցուցիչ

1. ՀՖԿՍՊԻ-ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈԱ քաղաքականությունը սահմանում է ՀՖԿՍՊԻ-ի սկզբունքային մոտեցումները ՈԱ հիմնահարցերի և դրանց իրագործման ուղիների վերաբերյալ:

ՀՖԿՍՊԻ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակն է՝ բարձրացնել ՀՖԿՍՊԻ ուսումնական և հետազոտական աշխատանքների, հասարակությանը մատուցվող ծառայությունների որակը և կառավարման գործընթացների արդյունավետությունը՝ դրանք համապատասխանեցնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքներին:

Այն իրականացվում է ըստ Ինստիտուտի ռազմավարական ծրագրի և նպատակաուղղված է բուհի գործունեության բոլոր ոլորտներում որակի գործընթացների արդյունավետության բարձրացմանը՝ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ, նրանց ներգրավված արդյունավետության բարձրացմամբ:

ՈԱ քաղաքականության միջոցով ՀՖԿՍՊԻ-ն ստեղծում է ՈԱ մի այնպիսի համակարգ, որը հստակ սահմանում է ՈԱ ինստիտուցիոնալ գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները, ՈԱ համակարգի կառուցվածքը և ընթացակարգերը:

Որակի ապահովման համակարգի գործընթացները ներկայացնում են բարելավման և կատարելագործման շրջափուլ, նպաստում են հաստատության հաշվետվողականությանը, կայուն զարգացմանը, կրթական միջավայրի, որակի մշակույթի ձևավորմանը, որտեղ բոլոր շահակիցները մասնակցում և պատասխանատվություն են կրում որակի ապահովման համար: Գործընթացի արդյունավետ աջակցման նպատակով ՈԱ քաղաքականությունը իրականացվում է պաշտոնական կարգավիճակով և մատչելի է հասարակայնությանը: Որակի ապահովման քաղաքականությունը արդյունավետ է, եթե այն գործնականում իրացնում է կապը գիտահետազոտության, ուսումնառության, դասավանդման միջև և հաշվի է առնում ներբուհական ու ազգային կոնտեքստները, ռազմավարական մոտեցումները և աջակցում:

- ✓ որակի ապահովման մշակույթի ամրապնդմանը,
- ✓ ամբիոններին, ֆակուլտետներին և կառուցվածքային այլ ստորաբաժանումներին, ինչպես նաև հաստատության վարչակազմին և ուսանողությանը, որոնք կատարում են իրենց պարտականությունները որակի ապահովման բնագավառում,
- ✓ ակադեմիական ազնվությանը, թափանցիկության և հաշվետվողականության համակարգի շարունակական բարելավմանը,
- ✓ արտաքին շահակիցների մասնակցությանը որակի ապահովման գործընթացներում:

2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՀՖԿՍՊԻ-ի Որակի քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով և ներքին ու/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, փորձագիտական եզրակացությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա՝ կրթական գործընթացների որակի տեսանկյունից դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները ու մտադրությունները:

Որակի ապահովման բաժնի կողմից առանձնացված չափանիշները, չափորոշիչները և կատարողական ցուցանիշները պարբերաբար վերանայվում և փոփոխվում են՝ հավաստելու դրանց արդիականությունը, պիտանիությունը և համապատասխանությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում առաջացող նոր միտումներին ու զարգացումներին:

Բուիը պարբերաբար մշտադիտարկումներ, քննարկումներ և վերլուծություններ պետք է նախաձեռնի որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման խնդիրների վերաբերյալ, որի արդյունքում կատարվում են պլանների վերանայումներ, շտկումներ և/կամ վերամշակումներ: Եթե հաստատությունը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա պետք է մշակել բարելավման ծրագրեր՝ նրանցում ներառելով համապատասխան միջոցառումներ: Բարելավման միջոցառումները այդ փուլում կարող են բարելավման ծրագրերի մաս դառնալ:

Դա ձևավորվում է որակի կառավարման շարժիչ սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում՝ ՊԻԳԲ գործընթացով, որի միջոցով բուիը իր և շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր չափանիշների է հասել գործունեության բոլոր ոլորտներում:

Այսպիսով, բարելավման գործողությունները կարող են ներառել.

- ✓ որակի ապահովման և կառավարման քաղաքականության արդյունավետության ապահովում ներքին և արտաքին գնահատումների, պարբերական վերանայումների և համապատասխան շտկողական գործողությունների միջոցով՝ հաստատության զարգացման հայեցակարգին, ռազմավարական նպատակներին և ծրագրերին համապատասխան,
- ✓ գործունեության հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման և ներքին ու արտաքին շահառուներից ստացված կարծիքների

- հիման վրա գործող մեխանիզմների անընդհատ կատարելագործում, արդյունավետության բարձրացում, որակի ապահովում,
- ✓ որակի ապահովման և բարելավման համար առանցքային նշանակություն ունեցող կատարողական տվյալների հավաքագրում, մշակում վերլուծում և գնահատում,
 - ✓ հետադարձ կապի ազդեցության մեխանիզմով ներքին և արտաքին շահակիցների կարիքների, պահանջների հաշվառում և համապատասխան շտկողական գործողությունների իրականացում հաստատության գործունեության յուրաքանչյուր տիրույթն ամբողջապես գնահատելու և մանրազնին ուսումնասիրելու, իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար,
 - ✓ ռազմավարական ծրագրերի, պլանների կատարման ընթացքի մշտադիտարկում և արդյունքների գնահատում ըստ գործունեության ոլորտների, անհրաժեշտության դեպքերում ծրագրերի վերանայում, վերամշակում, բարելավման ծրագրերի իրականացում,
 - ✓ կրթական միջավայրի պարբերաբար վերլուծություններ կրթական և գիտահետազոտական գործընթացների որակի տեսանկյունից՝ դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները ու մտադրությունները,
 - ✓ բուհի կրթական, գիտահետազոտական, վարչական և կազմակերպչական գործընթացների ընթացակարգերի պարբերաբար վերանայում, կատարելագործում, արդյունավետության բարձրացում,
 - ✓ որակի մշակույթի ձևավորում, շարունակական զարգացում, որակի ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման սահուն ընթացքի ապահովում,
 - ✓ արտաքին ազդեցության գործոնների, մարտահրավերների, ռիսկերի, սպառնալիքների կարճաժամկետ և երկարաժամկետ գնահատում և համապատասխան շտկողական գործողությունների իրականացում,
 - ✓ ինքնագնահատում, համեմատական վերլուծություններ և առաջավոր փորձի կիրառում՝ միջազգայնորեն ընդունված չափանմուշային կողմնորոշիչների օգտագործմամբ,
 - ✓ բենչմարքինգ, գործող ծրագրերի վիճակի և հեռանկարների գնահատում և բարելավման գործողություններ որակի ապահովման և կառավարման տեղական ու միջազգային հենանիշերին, չափանիշերին և չափորոշիչներին համապատասխան,
 - ✓ ներքին և արտաքին փորձագիտական եզրակացությունների հիման վրա առանձին ոլորտների կամ ինստիտուցիոնալ գործունեության արդյունքների գնահատում և համապատասխան բարելավման ծրագրերի իրականացում:

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Որակի ապահովման համակարգի (ՈԱՀ) հիմնական առաքելությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության շարունակական բարելավմանն օժանդակելն է, որը կարող է իրականանալ ներգրավված կողմերի ստանձնած պարտավորությունների շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով մասնակիցների կարողությունների հզորացում՝ աշխատակազմի շարունակական զարգացման միջոցով:

Կրթության որակը ՀՖԿՍՊԻ-ում

ՈԱ համակարգում որակի հասկացությունը բնութագրվում է որպես «համապատասխանություն սահմանված նպատակին», որը թույլ է տալիս բուհին իր որդեգրած առաքելության մեջ ներկայացնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու արդյունքների որակը:

ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունը, սահմանված նպատակներն ու խնդիրները «որակը՝ որպես բարելավում» մոդելի հիմնական ուղղորդիչներն են, քանի որ հստակեցնում են արդյունքների պլանավորման, մշտադիտարկման և չափման շրջանակը: Որակի այս սահմանումը բխում է «որակական փոխակերպում» հասկացությունից, որը վերաբերում է ուսանողների կարողությունների ընդլայնմանը և հզորացմանը կամ նոր գիտելիքի զարգացմանը:

Որակի ապահովման գործընթացները համակարգվում և ուղղորդվում են Որակի ապահովման բաժնի կողմից՝ ՈԱ չափանիշերին, չափորոշիչներին և ընթացակարգերին համապատասխան:

ՈԱԲ-ը համակարգում է ՈԱ գործընթացները բուհի տարբեր օղակներում, ապահովում է շահագրգիռ կողմերի մասնակցությունը ՈԱ մեխանիզմների մշակման և ներդրման գործընթացին, ներկայացնում է ՈԱ ներքին գնահատումների արդյունքներն ու կատարում բարելավման առաջարկություններ:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՂԵԼԸ

Որակի ապահովման գործընթացները միտված են «պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» շրջափուլի ապահովմանը: Ինստիտուտում յուրաքանչյուր գործընթացի կանոնակարգման նպատակով մշակվող և վերանայվող փաստաթղթերի հիմքում դրվում են որակի կառավարման սկզբունքները, որի հիմնական քայլերն են՝

Պ (պլանավորում). այս փուլում իրականացվում է գործընթացների պլանավորում՝ հիմնվելով խնդիրների վերհանման արդյունքում հավաքված տվյալների վրա՝ այդ խնդիրներին հնարավոր լուծումներ տալու նպատակով,

Ի (իրականացում). այս փուլում իրականացվում են նախանշված պլանները, սովորաբար բոլոր մշակումները նախապես փորձարկվում են,

Գ (գնահատում). այս փուլում գնահատվում և վերլուծվում է իրականացված գործընթացների որակը, ինչպես նաև վերահսկվում է արդյունքների համապատասխանությունը նախանշված նպատակներին և ձեռքբերումներին: Անհրաժեշտության դեպքում, կատարվում են համապատասխան լրամշակումներ:

Բ (բարելավում). այս փուլում, հիմք ընդունելով «գնահատման» փուլի արդյունքները, կատարվում են բարելավմանը միտված գործողություններ և ձեռնարկվում են համապատասխան (վերա)պլանավորումներ:

ՈՒԱ համակարգի հիմնական նպատակներն են՝

- ❖ նպաստել ՀՖԿՍՊԻ-ի առաքելության, նպատակների և խնդիրների իրականացմանը,
- ❖ ապահովել կրթական ծրագրերի կազմման, քննարկման, հաստատման, մշտադիտարկման, վերանայման և բարելավման ընթացակարգերի կիրառման որակը,
- ❖ աջակցել որակի կառավարման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների դերակատարության ընդլայնմանը և ամրապնդմանը,
- ❖ բարձրացնել բուհի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունն ու որակը,
- ❖ մշտադիտարկել բուհի տարբեր գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը,
- ❖ ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք՝ ՀՖԿՍՊԻ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, հաստատել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- ❖ ապահովել կրթական գործընթացների որակի վերաբերյալ հաշվետվողականությունն ու տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցների առջև,
- ❖ օժանդակել ազգային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների հետ կապերի ամրապնդմանը,
- ❖ խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը:

Սահմանված նպատակներից բխում են ՀՖԿՍՊԻ ՈԱ համակարգի հետևյալ խնդիրները՝

- ❖ համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական ծրագրերի որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը,
- ❖ ստեղծել պայմաններ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար,
- ❖ ՈԱ համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,

- ❖ ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- ❖ ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար:

Որակի ապահովման բաժինը ՈԱ քաղաքականությունը կիրառելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

Համակարգային մոտեցում բուհի գործունեության ոլորտներում իրականացվող փոխկապակցված գործընթացների կառավարման, արդիականացման, որակի բարելավման և արդյունավետության բարձրացման նկատմամբ՝ պարբերաբար մշտադիտարկման, որակի ապահովման ներքին աուդիտի, հետադարձ կապի և արտաքին գնահատումների միջոցով:

Կենտրոնացված կանոնակարգում. ՈԱ գործընթացների համար գործում են միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնց հետևում են ուսումնական բոլոր ստորաբաժանումները: Այստեղ հիմնական համակարգող դերը վերապահված է Գիտական խորհրդին (ԳԽ), որն իրականացնում է համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, ՈԱ նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը:

Գործընթացների ապակենտրոնացված իրականացում. ՈԱ գործընթացները կանոնակարգվում են կենտրոնացված եղանակով, սակայն իրականացվում են ապակենտրոնացված ձևով՝ ֆակուլտետներում, ամբիոններում, վարչական բաժիններում: Վերջիններս էլ այդ գործընթացներում ներգրավում են դասախոսներին, ուսանողներին, շրջանավարտներին, գործատուներին:

Վերջնարդյունքա-գործընթացային. այս մոտեցման դեպքում որակը գնահատելիս հիմնականում հաշվի են առնվում ինչպես գործընթացների իրականացումը, այնպես էլ ուսումնառության արդյունքները:

Ինքնագնահատում. բուհի գործունեությունը գնահատվում է ըստ իր նպատակների և նախասահմանում է բոլոր գործընթացների պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման շրջափուլային իրագործում: Նպատակները պետք է պլանավորվեն, իսկ գործողությունները՝ լինեն չափելի: Սահմանված նպատակները պետք է ձևավորված լինեն «SMART» սկզբունքով, այն է՝ որոշակիություն (S), չափելիություն (M), հասանելիություն (A), իրագործելիություն (R), ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն (T):

Հենանշումների (բենչմարքինգի) վրա հիմնված մոտեցում. Ինստիտուտը գնահատում է իր ձեռքբերումները ազգային և միջազգային հենանիշների համեմատական վերլուծությամբ: Բենչմարքինգը որպես որակի ապահովման գործընթաց, թույլ է տալիս ուսումնական հաստատությունում իրականացնել:

- ❖ լավագույն փորձի ուսումնասիրություն և վերլուծություն՝ բուհի գործունեության բարելավմանը ուղղված որոշումներ կայացնելու համար,
- ❖ ներդրումներ՝ ուղղված Ինստիտուտի առանձին գործընթացների կամ գործողությունների բարելավմանը,
- ❖ բարեփոխումներ բուհի որակի ապահովման համակարգում:

Անձնակազմի ընդլայնված մասնակցություն. բուհը խրախուսում է դասախոսական և վարչական կազմերի ընդլայնված մասնակցությունը ՈԱ և բարելավման գործընթացներին, խթանում անհատական նախաձեռնությունները ուսումնական և վարչական ստորաբաժանումների ՈԱ գործընթացներում: ՈԱ կառավարման մասնակցային սկզբունքը ապահովվում է նաև ներքին շահակիցների հետ (ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական կազմ և գործատուներ) հետադարձ կապի կայուն մեխանիզմների կիրառմամբ, որի միջոցով ձեռքբերված տեղեկատվությունն ու վերլուծական տվյալները օգտագործվում են կառավարչական որոշումների կայացման գործընթացում: Հետադարձ կապի մեխանիզմով ներքին և արտաքին շահակիցների կարիքների պարբերական վերհանման և գնահատման մեխանիզմով հաստատության գործունեության տարբեր տիրույթներ մշտադիտարկվում են, վերլուծական տվյալների հիման վրա պլանավորվում և իրականացվում են համապատասխան շտկողական գործողություններ:

Վերապատրաստումներ և զարգացում. գնահատված կարիքի հիման վրա դասախոսական և վարչական համակազմի մասնագիտական վերապատրաստում և կարողությունների շարունակական զարգացում,

Ուսանողների և արտաքին գնահատողների ներգրավում. Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներից է ուսանողների, շրջանավարտների և գործատուների լիարժեք մասնակցությունը ՈԱ գործընթացներում, որը նաև ՈԱ համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է:

Հաշվետվողականություն և թափանցիկություն. ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը կրթական և գիտահետազոտական ծառայությունների բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատությունից: Այս համատեքստում հաշվետվողականության ապահովումը ներառում է ներքին (ուսումնառողներ, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ) և արտաքին (պետական մարմիններ, գործատուներ, շրջանավարտներ, հասարակություն) շահակիցներին պարբերաբար թարմացվող տեղեկատվության և ճշգրիտ ու հավաստի տվյալների ներկայացումը, մասնավորապես՝

- ✓ Ինստիտուտի հասարակական դերակատարման վերաբերյալ,
- ✓ բուհի գործունեության արդյունքների վերաբերյալ,
- ✓ ուսումնական հաստատության զարգացման ծրագրի և դրա շրջանակում ձեռքբերված արդյունքների վերաբերյալ,

- ✓ ուսանողների, շրջանավարտների, պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վերաբերյալ:

Ներքին հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն են՝

- ✓ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից ռեկտորատի, գիտական խորհրդի և այլ նիստերի արձանագրությունների բովանդակության ներկայացումը աշխատակիցներին,
- ✓ բուհի գործունեության արդյունքների ներկայացումը ռեկտորատում, գիտական խորհրդում, հոգաբարձուների խորհրդում,
- ✓ ներքին տեղեկատվական թվային համակարգի կիրառումը:

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովումը բուհին թույլ է տալիս գնահատել իր գործունեության արդյունքները հետադարձ կապի մեխանիզմների և գործիքների միջոցով: Արտաքին հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն են՝

- ✓ Ինստիտուտի ռեկտորատի և գիտական խորհրդի որոշումների արձանագրությունների ներկայացում բուհի պաշտոնական կայքում՝ <https://sportedu.am>,
- ✓ Հոգաբարձուների խորհրդի որոշումների ներկայացումը պաշտոնական կայքում,
- ✓ բուհի գործունեության արդյունքների ներկայացումը, ընթացիկ իրադարձությունների և միջոցառումների լուսաբանումը Ինստիտուտի պաշտոնական և սոցիալական կայքերում, ինչպես նաև՝ ՋԼՄ-ներում,
- ✓ ՀՖԿՍՊԻ-ի գործունեության վերաբերյալ բուկլետներ և ուղեցույցներ,
- ✓ Տեղեկատու հարթակներում Ինստիտուտի ներկայացվածություն,
- ✓ Ինստիտուտի հաշվետվության ներկայացում համագործակցող բուհերի, կազմակերպությունների համատեղ նիստերին:

Բարելավում. ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ համակարգը միտված է որակի շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: Ինքնագնահատումը, ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը դիտարկվում են որպես ՈԱ շարունակական բարելավման կարևոր գործիքներ:

ՈԱ ներքին և արտաքին գործընթացների փոխկապվածություն. Որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման գործընթացների փոխհամաձայնեցումը ապահովում է համապատասխան հիմքեր որակի արտաքին գնահատման համար և նպաստում է ՀՖԿՍՊԻ-ի ու նրա կրթական ծրագրերի հավատարմագրմանը:

5. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական ծրագրին համապատասխան, որակի ապահովման կրթական, գիտահետազոտական, միջազգայնացման տարաբնույթ գործընթացներով՝ բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ:

ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և կոնկրետ գործողությունների վերաձելու ՈԱ քաղաքականությունից բխող գործընթացները և ուղղորդելու դրանց իրականացման ընթացքը, որի արդյունքները գնահատվում են պարբերական մշտադիտարկումների և որակի ապահովման ներքին աուդիտի միջոցով:

Որակի ապահովման համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմներն ու ընթացակարգերը միտված են պարբերաբար գնահատելու ՈԱ հետևյալ հիմնական ոլորտները.

Ոլորտ 1. Ռազմավարական նպատակներին համահնչեցված կառավարման արդյունավետ համակարգ. Ինստիտուտի կառավարման համակարգը և վարչական կառույցները, դրանց գործառնումը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը: Այս առումով, բուհի կառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն և անհրաժեշտ ուղղություններից մեկը հետադարձ կապի արդյունավետ կառուցակարգերի մշակումն է և դրանց իրագործման միջոցների հստակեցումը: Հետադարձ կապի շնորհիվ ստացված տեղեկատվությունն օգտագործվում է բուհի քաղաքականության և ընթացակարգերի հետագա հստակեցման, ինչպես նաև ռազմավարական և գործառնական պլանավորման արդյունավետ կազմակերպման նպատակով:

Ոլորտ 2. Տվյալների հավաքագրման և կառավարման գործող մեխանիզմներն ու ընթացակարգերը. ՀՖԿՍՊԻ-ին իր առաջարկած կրթական ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակում է ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, հավաստի տեղեկատվություն: Հավաստի տեղեկատվությունն անհրաժեշտ պայման է որոշում ընդունելու համար և գնահատելու՝ ինչն է աշխատում արդյունավետ, իսկ ինչը բարելավման կարիք ունի:

Ինստիտուցիոնալ ռազմավարության իրականացման գնահատման գործիքակազմը ստեղծվում է կատարողական ցուցիչների (**KPI**) սահմանմամբ, որոնք վերլուծության են ենթարկվում՝ ըստ ինստիտուցիոնալ նպատակների իրականացման: Գործունեության արդյունավետության ցուցիցների աղբյուր կարող են լինել՝

- ✓ Դիմորդների և ընդունելության թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների
- ✓ Օտարեկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
- ✓ Հիմնական ուսանողական համակազմը (սովորողների քանակը՝ ըստ կրթական ծրագրերի)

- ✓ Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
- ✓ Շրջանավարտները՝ ըստ կրթական ծրագրերի, տարբեր տարիների շրջանավարտների զբաղվածության մակարդակը
- ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան համալրումը՝ ըստ գիտական աստիճանների և կոչումների
- ✓ Դասախոսների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, հետազոտական միջազգային նախագծերում
- ✓ Ուսումնառողների ներգրավվածությունը հետազոտական նախագծերում (հաշվեկշիռը)
- ✓ Ուսանողի կողմից դասախոսի գնահատման հարցման արդյունքները (հարցման միջին գնահատականը)
- ✓ Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը
- ✓ Ինստիտուտի անդամակցությունը (մասնակցությունը) միջազգային կազմակերպություններին և ասոցիացիաներին
- ✓ Միջազգային գործուղումների թիվը, մասնակիցների հաշվեկշիռը
- ✓ Գործուղումներ/ այցելություններ արտասահմանից ՀՖԿՍՊԻ
- ✓ Ուսանողական և ՊԴ ներգնա և արտագնա շարժունության ցուցանիշները
- ✓ Տարեկան եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը
- ✓ Արտաբյուջետային և բյուջետային մուտքերի մասնաբաժինը ընդհանուր մուտքերում
- ✓ Հետազոտական մուտքերը՝ ըստ աղբյուրների
- ✓ Միջազգային դրամաշնորհների տարեկան ծավալը
- ✓ ՀՖԿՍՊԻ-ում գործող մասնագիտական խորհուրդները և մասնագիտությունները
- ✓ Բուհի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներին տրամադրվող տեղեկատվության հասանելիության և օգտակարության ցուցանիշները:

Ոլորտ 3. Մասնագիտության կրթական ծրագրեր և դասընթացներ. Մասնագիտության կրթական ծրագրերի պարբերաբար վերանայման միջոցով գնահատվում է դասավանդման և ուսումնառության որակը, կրթության որակի համապատասխանությունը ուսանողների և շրջանավարտների պահանջներին՝ երաշխավորելով վերանայվող, նոր ստեղծվող ծրագրի հիմնավորվածությունը (հասարակական և աշխատաշուկայի պահանջարկը, ռեսուրսային ապահովվածությունը և այլն), ծրագրի համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակ պահանջներին, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների փոխկապակցվածությունը, պրակտիկ բաղադրիչի ծավալը:

Յուրաքանչյուր նոր ՄԿԾ-ի և նրա բաղադրիչների հաստատման, ինչպես նաև գործող ՄԿԾ-ներում և համապատասխան բաղադրիչներում փոփոխություններ կատարելու համար սահմանված են հստակ ընթացակարգեր («ՀՖԿՍՊԻ

մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման», «ՀՖԿՄՊԻ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» կարգեր):

Այսպիսի գործընթացներ մշակելիս և գնահատելիս հաշվի են առնվում ներքին և արտաքին տարբեր գործոնների փոփոխությունների միասնական ազդեցությունը ՄԿԾ-ի իրականացման արդյունավետության վրա՝ հավաստելու համար, որ տվյալ ոլորտի ՄԿԾ-ները զարգացող գիտելիքի և վերջինիս կիրառելիության տեսանկյունից շարունակում են արդիական և վավեր մնալ:

Պարբերական վերանայումը գնահատում է ծրագրի վավերականությունը ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունը՝ հետևյալ տեսանկյուններից՝

- ✓ ՄԿԾ-ի մշակման և իրականացման թե՛ ընդհանուր, թե՛ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների ազդեցություն,
- ✓ դասախոսական կազմի և նյութական ռեսուրսների մշտական հասանելիություն,
- ✓ ներքին և արտաքին շահակիցների պահանջներ և կրթական ակնկալիքներ,
- ✓ համապատասխան ոլորտի հետազոտության և փորձի, տեխնոլոգիական առաջընթացի, դասավանդման ու ուսումնառության վերջին զարգացումներ,
- ✓ արտաքին հղման կետերում, օրինակ՝ ՈԱՇ-ում, ՈՈՇ-ում կատարված փոփոխություններ:

Ոլորտ 4. Դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը ներառում է ՊԴ կազմի կողմից դասավանդման և ուսուցման կիրառվող մեթոդների և մոտեցումների պարբերական գնահատումը, նպատակ ունի աջակցելու ուսանողակենտրոն ուսուցման համակարգի, դասավանդման մոտեցումների ու կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը, ապահովել դասախոսների առաջխաղացումը և խրախուսումը, ներքին շահակիցների հետ հարցման արդյունքների հիման վրա բարելավել կրթական ծրագրերի որակը:

Պրոֆեսորադասախոսական կազմի կառավարման ինքնավարությունը ներառում է մարդկային ներուժի կառավարման հիմնական գործառույթները՝ աշխատակազմի/մարդկային ներուժի ռազմավարական պլանավորում, աշխատակազմի համալրում (հավաքագրում և ընտրություն), մասնագիտական կողմնորոշում և հարմարում (ադապտացում), կատարողականի կառավարում, առաջխաղացում, խրախուսման և փոխհատուցման համակարգերի կազմակերպում, մասնագիտական զարգացում, պաշտոնուղու (կարիերայի) պլանավորում, աշխատանքային հարաբերությունների կարգավորում և բախումների կառավարում:

Ոլորտ 5. Ուսանողների գնահատումը. գնահատումը միջոց է հավաստելու ուսանողների առաջադիմությունը, յուրացրած գիտելիքի մակարդակը, ստացված վերջնարդյունքը, դրա համապատասխանությունը կրթական նպատակներին և խնդիրներին: Ուսանողի գիտելիքների գնահատումը հանրագումարում չափում է դասընթացի վերջնարդյունքում կարևորվող և ձեռք բերված գիտելիքի,

հմտությունների ու կարողությունների մակարդակը, ապահովում հետադարձ կապը՝ որպես որակի ապահովման ցուցանիշ:

Գնահատման միասնական մեխանիզմը պարունակում է գնահատման հստակ չափանիշներ ու չափորոշիչներ, ինչպես նաև աջակցող ընթացակարգեր, որոնք ապահովում են ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը և գնահատականների նշանակման հուսալիությունը և արժանահավատությունը:

Ուսանողների ինչպես ընթացիկ (միջանկյալ), այնպես էլ եզրափակիչ գնահատման ՈԱ մեխանիզմների առկայություն, ինչպես օրինակ՝

- ✓ դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ),
- ✓ ծրագրի կրթական վերջնարդյունքների գնահատում (ձևավորող և եզրափակիչ գնահատում,
- ✓ ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ ամենամյա ուսանողական հարցումներ՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով,
- ✓ ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ դասախոսական կազմի պարբերական հարցումներ՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով:

Ոլորտ 6. Դասախոսական կազմի որակի գնահատումը ներառում է որակավորումների, գիտական աշխատանքի և շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ բազմաչափ գնահատման քանակական և որակական գնահատման արդյունքներ: Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման նպատակն է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառմանը (օրինակ՝ ինտերակտիվ, ուսանողակենտրոն ուսուցումը, բազմաթիվ աղբյուրներից ստացված նյութերի օգտագործումը և գիտելիքի ձեռքբերման եղանակը, որը նպաստում է քննադատական մտածողության ձևավորմանը և գիտելիքի վերարտադրությանը):

ՀՖԿՍՊԻ-ում գործում են դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման կառուցակարգեր, որոնք ներառում են դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, դասավանդման պորտֆոլիոները, պլանավորված և չպլանավորված դասախոսների արդյունքները, մասնագիտական և գիտամանկավարժական գործունեության կատարողականի վարկանիշային տվյալները:

Դասախոսական աշխատանքի գնահատման համակարգում կարևորվում է ակադեմիական բարեվարքության և ազնվության մշակույթի ձևավորումը: Համաձայն ՀՖԿՍՊԻ-ում գործող «Աշխատանքային էթիկայի կանոնագրքի»՝ Ինստիտուտը պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացվող պահանջներից առաջնային է դիտարկում ակադեմիական ազնվության և գիտական էթիկայի նորմերի պահպանումը, ինչպես օրինակ՝ գրագողության դեմ պայքարը (այլ հեղինակի բառերը կամ մտքերն օգտագործելը՝ առանց աղբյուրը նշելու, ինչպես նաև աղբյուրում առկա

տեղեկությունները, մտքերը կամ բառերը որպես քո սեփականը ներկայացնելը առանց դրանք որպես մեջբերում ներկայացնելու):

Նախապատրաստական լրացուցիչ և շարունակական կրթության, Որակի ապահովման, ՄՌԿ և ընդհանուր բաժինները դասավանդման բարելավման գործընթացում ունեն խորհրդատվական և աջակցող դերակատարություն՝ դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման և դասավանդման կատարելագործման ծրագրերի իրականացման, դասավանդման ոլորտում գերազանցության մրցանակների տրամադրման միջոցով:

Կանոնակարգված է նաև դասախոսների գիտական գործունեության արդյունավետության գնահատման համակարգը՝ հիմնված քանակական/որակական սանդղակների և գիտական արդյունքների կիրառելիության ցուցանիշների վրա ([«ՀԿՍՊԻ-ի աշխատակիցների աշխատանքային գործունեության տարեկան արդյունքների ամփոփման և գնահատման ընթացակարգ»](#)):

Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները/չափանիշները մշակելիս հաշվի են առնվում ՀԿՍՊԻ-ի դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման ու առաջաջաման կարգերը և ընթացակարգերը:

Ոլորտ 7. Գիտահետազոտական գործունեություն. ՀԿՍՊԻ-ի գիտահետազոտական գործունեության որակի գնահատումն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- ✓ ՀԿՍՊԻ-ի գիտահետազոտական գործունեության կառավարումը, երկարաժամկետ ռազմավարությունն ու կարճաժամկետ ծրագրերը, որոնք արտահայտում են գիտահետազոտական ոլորտում ՀԿՍՊԻ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները, գիտահետազոտական գործունեության միջազգայնացման մակարդակը,
- ✓ ՀԿՍՊԻ-ի ֆակուլտետների, ամբիոնների, հետազոտական լաբորատորիաների/կենտրոնների և խմբերի գիտահետազոտական ներուժը, միջազգային և տեղական հետազոտական դրամաշնորհների ֆինանսավորման ծավալները,
- ✓ գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները,
- ✓ հետազոտական մուտքերը՝ ըստ աղբյուրների,
- ✓ հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը,
- ✓ դասախոսական կազմի ներգրավվածությունը հետազոտական նախագծերում/հաշվեկշիռը,
- ✓ ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեության ցուցանիշներ,
- ✓ գիտական հրատարակությունների թիվը, ՊԴ ներգրավվածությունը ազդեցության գործակից ունեցող միջազգային հրատարակություններում, դրանց հարաբերակցությունը դասախոսների թվին,
- ✓ միջազգային հետազոտական մուտքերի հաշվեկշիռն ընդհանուր հետազոտական բյուջեում,

✓ հետազոտությունների արդյունքների առևտրայնացման ցուցանիշները:

Ոլորտ 8. Ֆինանսական կառավարման ու ռեսուրսների հավաքագրման ու բաշխման կառավարման արդյունավետ համակարգ. ՀՖԿՍՊԻ-ում ֆինանսական կառավարման քաղաքականությունը միտված է սպահովելու ֆինանսական ռեսուրսների կայուն և բազմազանեցված հոսքեր և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը:

ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական ծրագրի նպատակներին փոխկապակցված բյուջեի պլանավորման համակարգը թույլ է տալիս սահմանել ու արդյունավետորեն իրականացնել ռազմավարական նպատակները և դրանց համապատասխան կիրառել ֆինանսական պաշարների բաշխման և օգտագործման առավել ճկուն քաղաքականություն ու ընթացակարգեր: Բուհի ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում են տարբեր աղբյուրներից՝ ուսման վարձավճարներից, պետական ֆինանսավորումից, պետական բյուջեով նախատեսված այլ հատկացումներից, ազգային ու միջազգային դրամաշնորհային ծրագրերից, գործընկեր կազմակերպությունների և/կամ ուսումնական հաստատությունների կողմից տրամադրվող կրթաթոշակներից ու նպատակային դրամաշնորհներից, անձեռնմխելի ֆոնդերից, սեփական գիտահետազոտական արդյունքների առևտրայնացումից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Ֆինանսական հատկացումների բաշխումը՝ ըստ ռազմավարական նպատակների և գերակայությունների հստակեցված է ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական 2022-2026 ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցում, որում ներառված քայլերը նպատակաուղղված են նպաստելու ֆինանսական կայունությանն ու ֆինանսական միջոցների կառավարման թափանցիկությանը:

Ոլորտ 9. Ուսումնական ռեսուրսներ և օժանդակ ծառայությունների ՈԱ գնահատումը միտված է զարգացնելու ուսանողական օժանդակ ծառայությունների, քանակական և որակական ցուցիչներով մշտադիտարկելու ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների հասանելիությունը, կիրառելիությունն ու արդյունավետությունը՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:

Տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների ՈԱ գնահատումը ներառում է հետևյալը.

- ✓ կրթական ծրագրի պահանջներին և առկա ենթակառուցվածքների և ռեսուրսների համապատասխանության գնահատում,
- ✓ ուսանողների կրթական և անհատական կարիքների բացահայտում և գնահատում, ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում,
- ✓ ուսանողությանը, պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմերին տրամադրվող օժանդակ ծառայությունների պարբերական մշտադիտարկում իրականացվող հարցումների միջոցով, որոնք գնահատում են ինստիտուտի ենթակառուցվածքներն ու դրանց կառավարումը, գիտահետազոտական

կենտրոն(ներ)ի, գրադարանի, ընթերցասրահի ու համակարգչային սրահների աշխատանքը և տրամադրվող ծառայությունների հասանելիությունը:

Ոլորտ 10. Հանրային ներգրավում. Հանրային և ինստիտուցիոնալ հարաբերությունների որակի գնահատումը ներառում է.

- ✓ հասարակության հետ կապերի գնահատումը՝ օպերատիվ լրատվությունը, հրատարակվող նյութերը, տեղեկատվության տարածման ձևերը և միջոցները, PR գործունեության նպատակայնությունը, բուհի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակը և ծավալը,
- ✓ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, հավաստի տեղեկատվության պարբերաբար հրապարակում բուհի պաշտոնական կայքում, համագործակցություն ՁԼՄ-ի հետ,
- ✓ բուհի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները,
- ✓ ՀՖԿՍՊԻ-ի ներգրավումը հանրային կարիքներին ուղղված ծրագրերում
- ✓ հարատև ուսումնառության համակարգը՝ շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացների/ծրագրերի քանակը և բազմազանությունը, այդ դասընթացներում ընդգրկված մասնակիցների թիվը
- ✓ թիրախային գործընկերների հետ շարունակական համագործակցությունը, հանրային և ոլորտային հայեցակարգերի, քաղաքականությունների մշակման գործընթացում ՀՖԿՍՊԻ-ի ներգրավվածությունը:

Ոլորտ 11. Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությունների ռազմավարական կառավարում. այս ասպարեզում բուհի ռազմավարական հիմնական ուղղությունն է խթանել միջազգայնացման շարունակական գործընթացն ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում: Միջազգայնացման գործընթացների որակի գնահատումը ընդգրկում է հետևյալ ուղղությունները՝

- ✓ միջազգայնացման համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացում, միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում,
- ✓ աշխատակիցների և սովորողների շրջանում շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանի բարձրացում, շարժունության ծրագրերում ներգրավվածության ընդլայնում,
- ✓ արտասահմանյան, երկրների բուհերի հետ համատեղ մագիստրոսական ծրագրերի ստեղծման ուղղությամբ համագործակցության զարգացում:

Ոլորտ 12. Որակի ներքին ապահովման համակարգը և կիրառվող մեխանիզմները, ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերը

- ✓ ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում,
- ✓ վերլուծական տվյալների հիման վրա որոշումների կայացման համակարգը,


- ✓ որակի ապահովման գործընթացների առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքների տեղանյացումը բուհի ՈՆԱ համակարգում,
- ✓ ՊԻԳԲ սկզբունքներով բարելավումների շրջափուլային գնահատման համակարգը,
- ✓ որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը,
- ✓ որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման փոխկապակցվածությունը:

6.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Որակի ներքին ապահովման համակարգի հիմնական առաքելությունը բուհի շարունակական բարելավումն ապահովելն է: Շարունակական բարելավման գործընթացը կարող է իրականանալ բոլոր հնարավոր ներգրավված կողմերի ստանձնած պատասխանատվությունների շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով անձնակազմի կարողությունների շարունակական զարգացումը:

ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները պատասխանատվություն են կրում տարբեր գործընթացների վերջնարդյունքների որակի համար:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակը վերահսկում են Ինստիտուտի **ռեկտորը** և **Գիտական խորհուրդը (ԳԽ)**՝ հաշվետվությունների հիման վրա: ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհուրդը հաստատում է ՈԱ ռազմավարությունը, քաղաքականությունը, քննարկում է ընթացիկ զեկույցները, տարեկան հաշվետվությունները և առաջարկվող բարելավումների գործողություններն ու քայլերը:

ՀՖԿՍՊԻ-ի Գիտական խորհուրդը հաստատում է ՈԱ քաղաքականությունը և ռազմավարությունը, բուհի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է ՈԱ գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման կոնկրետ ծրագրեր, իրականացնում է ՈԱ գործընթացների վերլուծությունների արդյունքների եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:

ԳԽ-ն լսում է ՈԱԲ ղեկավարի զեկույցը ներքին և արտաքին շահակիցների հետ անցկացվող հարցումների արդյունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում կայացնում է համապատասխան որոշում այդ գործընթացների բարելավման ուղղությամբ:

Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի տարեկան վերահսկողությունն ու գնահատումն իրականացնում է **Հոգաբարձուների խորհուրդը՝** ռեկտորի հաշվետվության հիման վրա: Հոգաբարձուների խորհուրդը հաստատում է նաև Ինստիտուտի գործունեության երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը, բյուջեն, հաստիքացուցակը, լսում և գնահատում է ՀՖԿՍՊԻ-ի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը: Տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկվում են ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրվում բարելավման ուղիներ:

ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորը ղեկավարում է ՈԱ քաղաքականության և ՈԱ ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում ՈԱ համակարգի ներդաշնակ փոխգործակցությունը ՀՖԿՍՊԻ-ի կառավարման այլ մարմինների հետ, կառավարում է բուհի ինքնագնահատման գործընթացը:

Պրոռեկտորները իրականացնում են ՈԱ համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը, ապահովում են ներգրավված հիմնական կառույցների միջև գործառական կապերն ու փոխգործակցությունը, մասնավորապես՝ ֆակուլտետների, Ուսումնական գործընթացի կառավարման բաժնի, Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի, կառուցվածային այլ համապատասխան ստորաբաժանումների միջև, կազմակերպում ՀՖԿՍՊԻ-ի տարեկան գործունեության արդյունքների ինքնագնահատման գործընթացը, ինքնագնահատման զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումը, իրականացումն ու վերահսկումը:

ՀՖԿՍՊԻ-ի ֆակուլտետները պատասխանատու են ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման համար,

իրականացնում են մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, իրականացման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) ու պարբերական վերանայման գործընթացները, ապահովում և վերահսկում են ֆակուլտետում գիտահետազոտական գործունեության որակը:

ՀՖԿՍՊԻ-ի **Որակի ապահովման բաժինը** հաշվետու է բուհի ռեկտորին և ապահովում է կրթական ծրագրերի իրականացման որակի հսկողությունը, ինչպես նաև պարբերաբար գնահատում բուհի տարբեր ոլորտների գործունեության արդյունքները, դրանց համապատասխանությունը սահմանված չափանիշներին/ուղենիշներին:

Որակի ապահովման բաժինը պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և գործընթացների իրագործման վերահսկողության և մշտադիտարկման համար: Կրթական գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև հաստատութենական (ինստիտուցիոնալ) տարբեր մակարդակներում կառավարման գործընթացները մշտադիտարկվում են ուսումնական տարվա ողջ ընթացքում համապատասխան գործիքակազմի միջոցով: Բուհի տարբեր գործընթացների արդյունքների մշտադիտարկման և որակի կառավարման շրջանակում տեղեկատվության հավաքման և վերլուծման նպատակով ՈԱԲ-ը համագործակցում է ՀՖԿՍՊԻ-ի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ: Մշտադիտարկումների արդյունքներն ամփոփվում են ընթացիկ/տարեկան վերլուծական զեկույցներում, մշակվում են համապատասխան երաշխավորություններ, առաջարկություններ և միջոցառումներ՝ թերությունները շտկելու, իսկ լավագույն փորձը՝ տարածելու նպատակով:

Բաժինը՝

1. ապահովում է Ինստիտուտի որակի ներքին ապահովման (ՈՆԱ) գործընթացների համակարգումը, հետևում է ՈՆԱ համապատասխան մեխանիզմների և գործիքների կիրառելիության արդյունավետությանը,
2. մշակում է ՈՆԱ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներն ու գործիքակազմը, վերահսկում և գնահատում է այդ մեխանիզմների կիրառելիության արդյունավետությունը,
3. կազմակերպում է մասնագիտության կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները, հետևում և աջակցում է այդ աշխատանքների կատարմանը Ինստիտուտի ուսումնագիտական ստորաբաժանումներում (ամբիոններում),
4. գնահատում է կրթության կազմակերպման գործընթացը, այդ թվում՝ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, մարդկային ներուժի ապահովվածության արդյունավետությունը, ներկայացնում է համապատասխան առաջարկություններ,

5. պարբերաբար կազմակերպում է կրթության որակի ապահովման վերաբերյալ սեմինարներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ներկայացուցիչների համար,
6. ձևավորում է Ինստիտուտի ստորաբաժանումների հետ փոխգործակցության այնպիսի մոդել, որը կնպաստի բուհում որակի մշակույթի ամրապնդմանն ու զարգացմանը:

ՈԱ պատասխանատուներ (որակի աջակիցներ) կառուցվածքային ստորաբաժանումներում ներառում է ներկայացուցիչներ բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմից, ովքեր վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի մշակման, վերանայման և դրանց ՈԱ գործընթացների իրականացումը: Ամբիոնի ՈԱ պատասխանատուն տրամադրում է ամբիոնի վարիչին տեղեկատվական, մեթոդական, կազմակերպական օգնություն ՀՖԿՍՊԻ-ի որակի բնագավառում ամբիոնի աշխատանքների պլանավորման, վերահսկման, մշտադիտարկման, վերլուծության հարցում, նաև ամբիոնի վարիչի հետ մեկտեղ կազմակերպում և համակարգում է կրթական ծրագրի ինքնագնահատման աշխատանքները:

Ուսանողները ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում և մասնակցում են՝

- ✓ որակի ապահովման գործընթացներին՝ որպես շահակիցներ և ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,
- ✓ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում,
- ✓ ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսների որակի գնահատման գործընթացներում,
- ✓ ինստիտուտիցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացներում:

Արտաքին շահակիցները ընդգրկվում են՝

- ✓ ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական ծրագրի մշտադիտարկման, գնահատման հանձնաժողովներում,
- ✓ ինստիտուտի որակի ներքին ապահովման գործընթացներում,
- ✓ մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում,
- ✓ Ինստիտուտի ուսումնական միջավայրի գնահատման գործընթացներում,
- ✓ ինստիտուտիցիոնալ կարողությունների և մասնագիտության կրթական ծրագրերի ինքնավերլուծության խմբերի աշխատանքներում,
- ✓ շրջանավարտների ամփոփիչ ավարտական աշխատանքների պաշտպանության գնահատման գործընթացներում,

- ✓ մասնակցում են ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ✓ մասնակցում են ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին:

Նպատակային հանձնախմբերը պատասխանատու են ուսումնական ծրագրերի, մասնագիտության կրթական ծրագրերի մասնագրերի, կրթական վերջնարդյունքների, անհրաժեշտ կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման համար, ներգրավվում են ՀՖԿՍՊԻ-ի գործունեության արդյունքների ընթացիկ մշտադիտարկումների և ինքնագնահատման աշխատանքներում:

7. ՀՖԿՍՊԻ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ փաստաթղթային ապահովումը և տեղեկատվական համակարգը ներառում են՝

- ✓ ՈԱ ձեռնարկը (ուղեցույցը), որը պարունակում է ՈԱ համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը,
- ✓ ՈԱ քաղաքականության նպատակները, խնդիրները և ռազմավարության հիմնադրույթները,
- ✓ ՈԱ սկզբունքները, գործառույթները, ընթացակարգերը և պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև,
- ✓ ՈԱ հիմնական գործընթացների համառոտ նկարագրությունը և որակի գնահատման սահմանված ընթացակարգերի փաթեթը,
- ✓ կանոնակարգեր և մեթոդական նյութեր՝ ՈԱ առանձին գործընթացների իրականացման վերաբերյալ:

ՈԱ տեղեկատվական համակարգն ու ռեսուրսային շտեմարանը ընդգրկում են՝

- ✓ ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ համակարգին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ ՈԱ քաղաքականություն, ՈԱ ձեռնարկ, կրթական ծրագրերի, դասախոսական կազմի, ուսանողների գնահատման և ուսումնառության ռեսուրսների որակի ու գնահատման հետ կապված ներքին իրավական ակտեր,
- ✓ ՈԱ գործընթացների իրականացման արդյունքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները, մշտադիտարկումներն ու զեկույցները,
- ✓ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար պատրաստված ինքնագնահատման վերլուծական զեկույցները և հարակից փաստաթղթերը,
- ✓ վիճակագրական և վերլուծական տվյալները,
- ✓ տարբեր հարցումների արդյունքների վերլուծությունները,
- ✓ կառավարման օղակների նիստերի արձանագրություններն ու որոշումները: